ԼՂԻՄ. ԱՐԴՅՈՔ ՍԱՌՈՒՅՑԸ ՏԵՂԻՑ ՇԱՐԺՎԵԼ Է

Օգոստոսի 22-ի առավոտյան կոնակցության Ստեփանակերտի քաղաքային կոմիտեի շենքի հրապարակում համարյա մարդ չկար։ Բանվորները գերադասել էին աշխատանքի դուրս գալու անհրաժեշտության մասին վեճերը շարունակել իրենց ձեռնարկություններում։ Արցախի լուսատեխնիկների կոլեկտիվի անդամների կեսից ավելին հավաքվել էր «Լույս» արտադրական միավորման էլեկտրատեխնիկական գործարանում։ Նույնպիսին էր պատկերը շինանյութերի կոմբինատում։ Այստեղ նախապատրաստական աշխատանքներ են սկսված։ Հատուցները մասնակիորեն գործի էին դրվել կոնդենսատորի գործարանում։

Ավելի քան եռամսյա ընդմիջումից հետո ստեփանակերտցիները հնարավորություն ստացան օգտվելու կենցաղի ծառայության աշխատողների սպասարկումներից։ Այցելությունների առիթ բացվել են կուլտուր-լուսավորական հիմնարկների, հասարակական սննդի օբյեկտների դռները։ Աստիճանաբար թափ են առնում տրանսպորտի աշխատողները, որոնք երեկ ձեռնամուխ եղան աշխատանքին։

Սակայն դեռ շուտ է ասել, որ աշխատանքային ռիթմը առաջիկա մեկ-երկու օրվա ընթացքում լրիվ կվերականգնվի։ Գործադուլի ազդակությունը հոգեբանությունը, որը պայմանավորված էր Ղարաբաղի պրոբլեմի լուծման հեռանկարների անորոշությամբ, դեռ մնում է կոշիկի, կահույքի և կարի ֆաբրիկաների, արտադրական կոմբինատի, որոշ այլ ձեռնարկությունների աշխատավորների մեջ։ Պատահական չէ, որ նրանցից շատերը օրվա առաջին կեսից հետո լքեցին իրենց աշխատատեղերը։

Այս բարդ ժամանակներում բնակչության շրջանում բացատրական մեծ աշխատանք են տանում Աղգային խորհրդի անդամները, կուսակցական, խորհրդային, կոմերիտական ակտիվը, ձեռնարկությունների, կազմակերպությունների, հիմնարկների ղեկավարները։ Մարդկանց հետ զրույցները հաճախ տեղի են ունենում ուղղակի քաղաքի փողոցներում։ Ստեփանակերտցիները պարտավոր են հասկանալ, որ այսօր չկա ավելի կարևոր խնդիր, քան մարզային կենտրոնի նորմալ կենսագործունեության շուտափույթ ապահովումը։ Անհրաժեշտ նյութերի բացակայության և աշխատանքին խանգարող մյուս գործոնների վկայակոչումները հիմա օրինաչափ չեն, քանզի հարկադրական պարապուրդները և գործադուլները ամենևին էլ միևնույն բանը չեն։

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
(Արմենպրեսի անձն. թղթ.)
Ստեփանակերտ